

14441

Դ. ՖՈՒՐՄԱՆՈՎ

ՈՒՓԱՅԻ ՅԵՎ

ՈՒՐԱԼՍԿԻ ՄՈՏ



ԽՈՀԱ ԺՈՂ. ԿԵՆՏ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ՄՈՍԿՎԱ, 1931

891-71
Բ-98
Մ.


Դ. ՖՈՒՐՍԱՆՈՎ

19 NOV 2010

ՈՒՓԱՅԻ 3ԵՎ

ՈՒՐԱԼՈԿԻ ՄՈՏ

1818



1931

Թարգմ. Ա. Տ.-Մ.

1045
46

Главлит № А-89.168

Заказ № 1078

Тираж 7.000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

Թշնամին անցավ գետի մյուս ափը, պայթեցրեց
բոլոր կամուրջները և ծառացավ Ուֆայի բարձր ափին
թնդանոթների յերախներով, գնդացիրների շնչափո-
ղերով, դիվիզիաների և կորպուսների սվիններով։ Այս-
տեղ խոշոր ուժեր եյին կենտրոնացել՝ Ուֆայի շրջանը
Կոլչակը չեր կամենում ձեռքից թողնել, և Բելայա
գետի աջ ափի բարձունքներից նա անմեկին դեկա-
վարում եր կոփվը զանազան կողմերից գրոհող կար-
միր դիվիզիաների դեմ։

Ուֆան յենթադրում եյին նվաճել շրջապատումով։
Աջ թեկի դիվիզիաներին առաջարրված եր անցնել
թշնամու թիկունքը, Արխանգելսկի գործարանի մոտ,
սակայն շարժման դժվարությունը նրանց հնարավո-
րություն չտվեց նույնիսկ մի մարտիկ փոխադրել
գեպի Բելայա գետը այն միջոցին, յերբ մյուսները
արդեն ընդհուպ մոտեցել եյին ափին։

Ուֆայի դեմ ծառացավ Զապայեվի դիվիզիան։ Նա
իր աջ թեկով՝ Պոպովի բըիզադայով կանգ առավ հըս-
կայական կամուրջի մոտ, վոր բարձր ձգված եր
գետի վրա և տանում եր ուղղակի գեպի քաղաք,
իսկ ձախ թեկը յետ եր ձգվել մինչ կրասնիյ Յար
փոքրիկ գյուղը, վոր քսան և հինգ վերստ հեռավո-

բության վրա յեր Բելայա գետի հոսանքով, — այս-
տեղ մօտեցան Շմարինի և Յելանի բրիգադները:

Յերբ Կրասնիյ Յարի մոտ զորամասերը կանցնեն
գետը և կշարժվեն դեպի քաղաք, Պոլովի բրիգադը
պետք ե ոգնի նրանց, գետն անցնելով կամուրջի մոտ:
Նա գեռ կայուն եր — այդ ահագին չուզունե կա-
մուրջը, բայց վոչ վոք չեր հավատում, վոր թշնամին
այդ կամուրջը անխախտ կթողնի. յենթաղը ում եյին,
վոր կամուրջը անսպայման ականված կիմի, այդ պատ-
ճառով ել չպետք ե անցնել նրանով: Բարձր հողա-
թմբերից կամուրջով անցնող յերկաթուղու գիծը տեղ-
տեղ քանդված եր, իսկ մեջտեղում խրված եյին մի
քանի խճով և աղբով բարձած վագոններ: Գետն անց-
նելու առայժմ վոչ մի հնարավորություն չկար —
հետո արդեն մարտիկները ճարեցին մի քանի նավակ,
բերին գերաններ ու տախտակներ և կազմեցին նոս-
րավուն շարժական լաստեր:

Բայց և այնպես դլսավոր հարվածը յենթաղը վում
եր Կրասնիյ Յարի կողմից: Ափ դուրս սլացավ Վի-
լուրի հեծելազորը: Կրասնիյ Յարից վոչ հեռու Բելայա
գետով Հանգիստ չվում եյին մի բուկսիր ու յերկու
փոքրիկ շոգենավ: Բազմությունը շատ խայտաբղետ
եր, բայց առավելապես, իհարկե, զինվորականներ
եյին, — նրանցից՝ յերեք տասնյակի չափ սպաներ:
Անհասկանալի, զարմանալի յեր այդ անհոգությունը, —
կածես թե մարդիկ չեյին ել մտածում ափից հար-
ձակվելու հնարավորության մասին և կամ բոլորովին

ել անտեղյակ եյին, վոր մօտ են կարմիր գնդերը:
Կավալերիստները բերանքաց մնացին, յերբ տախտա-
կամածի վրա տեսան ուսաղիրներով «պարոններին»:
Սպաները ևս մեկից չհասկացան ինչումն և գործը, —
յերևի, յուրայինների տեղ ընդունեցին:

— Կանգնիր — հրամայեցին ափից:
— Ինչու կանգնել — բոռացին այնտեղից:

— Կանգնեցրեք շոգենավերը, թե չե կրակ կրա-
նանք: Ափին մօտեցեք. — բոռում եյին կավալերիստ-
ները: Սակայն այնտեղ հասկացան, թե ինչումն ե
բանը, վորձեցին արագացնել ընթացքը, կարծելով,
վոր կիաջողվի մինչև ճահճները հասնել, ուր հեծե-
լազորը ափով հասնել չի կարող... Այդ նկատելով, կա-
վալերիստները ահեղաբար գոռացին՝

— Կանգնիր! կանգնիր...

Շոգենավերը շարունակում եյին առաջ շարժվել:
Տախտակամածից լսվեցին առաջին պայթյունները:
Հեծելազորը պատասխանում եր: Սկսվեց անհավասար
կռիվը: Շոգենավերի վրա կտղկանձեցին, զլսակորույս
ցած նետվեցին, պահվում եյին, վորտեղ վոր պա-
տահի: Շոգենավերը մօտենում եյին ափին: Սպա-
ները չեյին կամենում անձնատուր լինել — դրեթե
զլսովին գնդակում եյին իրենց, նետվում եյին ալիք-
ների մեջ: Այդ փոքրիկ շոգենավերը իսկական գանձ
եյին — նրանք հսկայական դեր կատարեցին կարմիր
գնդերի Բելայա գետը անցնելու գործում և միան-
գամայն թեթևացըին այն դժվար կացությունը, վորի

մեջ եր կարմիր հրամանատարությունը։ Այդ փոքրիկ շոգենավերը պահեցին ծածուկ, չթողին, վոր թշնամին հասկանա, թե վորքան թանգարժեք բան ե ընկել ձեռքերը։

Ֆրունզեյի հարձակումից յերկու որ առաջ, այս-տեղ յեկան ավտոմոբիլով Զապայելիս ու Ֆյոդորը և իսկույն հրամանատարներին ու կոմիսարներին խորհրդակցության հրավիրեցին, վորպեսզի պարզեն կացության բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, հաշվի առնեն և կշռադատեն բոլոր հնարավորությունները, նորից ու նորից հաշվեն իրենց ուժերը և հաջողության հնարավորությունները։

Ֆրունզեն մի յերեխի հատկություն ունի, վորը ամենից առաջ ոգնում ե իրեն լուծելու, կարծես, ամենախճճված և բարդ գործերը։ Նա ընկերական խորհրդակցության ե հրավիրում բոլոր շահագրգուվածներին, ամենապլիսավոր հարցերը դնում ե նրանց առաջ կարուկ կերպով, ժամանակավորապես մի կողմ թողնելով յերկրորդական հարցերը, շահերի ընդհարում ե առաջ բերում, վեճեր ե առաջացնում, ուղղում ե այդ վեճերը համապատասխան հունով։ Յերբ զրույցը արդեն վերջացած ե, Ֆրունզեյին մնում ե միայն հաշվի առնել յերևան բերած հնարավորությունները, հաշվել, համակերպել և անխուսափելի յեղակացություններ անել։ Այս միջոցը, թվում ե թե, շատ պարզ ե, սակայն ամեն մեկին նա չի հաջող-

վում, — համենայն դեպս ինքը ֆրունզեն այս միջոցին տիրապետում եր կատարելապես։

Այժմ, յերբ Կրասնիյ Յարում հավաքվել են դիվիզիայի առաջնորդները, պետք եր հաշվի առնել, բացի տեխնիկայից և մարտիկների քանակից, նաև մարտիկների վորակը, այս յեզակի հանգամանքներում հատկապես։ Ընտրությունը վիճակվեց իվանովո-Վոզնեսենսկիյ բանվորական դնդին։ Այս ընտրությունը պատճառաբար չեր արված։ Յելանի բրիգադի գնդերը ծածկել եյին իրենց անմահ հաղթական փառքով, մարտական տեսակետից նրանք առաջին տեղերից մեկն եյին գրավում, սակայն տվյալ մոմենտի համար պետք եր կանգ առնել բարձր գիտակցության տեր կարմիր ջուհակների գնդի վրա, — այս գործում միայն անսահման քաջությունը կարող եր բավական չլինել։

Խորհրդակցությունը վերջացավ։ Թուան, հեծան ձիերին, սլացան դեպի ափը, վորտեղից պետք ե սկսվեր փոխադրությունը։ Զիերին թողին կես-վերստ հեռավորության վրա, իսկ իրենք շարժվեցին վոտքով ավազու զառիվայրով, անընդհատ նայելով մյուս ափին, սպասելով, վոր ուր վոր ե կսկսվի հրաձանաձգությունը։ Սակայն լուր եր շուրջը։ Բարձրացան ըլքակի վրա և այստեղից հեռադիտակով դիտեցին հակառակ ափը, ընտրեցին տեղը, վերջնականապես և ստույգ պայմանավորվեցին գետն անցնելու մանրամասնությունների վերաբերմամբ և յետ դարձան։

Շուտով փոխաղրության յենթաղրված կետին մոտեցան յերկու փոքրիկ շոգենավեր, յերրորդը կանգնած եր ծանծաղուտում։ Ակսեցին բարձել վառելիքը, շինել վերելակները։

Մի ամբողջ որ ու գիշեր դեռ կանգնած եյին։ Արդեն մոտ են զմուական ժամերը…, Պայմանավորվեցին, վոր Յարի մոտ փոխաղրումը պետք ե ղեկավարի ինքը Զապայելը, իսկ Ֆյոդորը պետք ե գնադեալի կամուրջը, վորի մոտ ծավալվել ե Պոպովի բըիգադը, և պետք ե ղեկավարի այդ ոպերացիան մինչեւ քաղաք մտնելը։ Բաժանվեցին։

* * *

Արդեն իրիկվանից Կրասնիյ Յարի ափերին տիրում եր մի արտասովոր կենդանություն։ Սակայն և լուսթյուն եր, այսպիսի դեպքերի համար արտասովոր։ Մարդիկ վխտում եյին ստվերների նման, խմբավորում եյին, հալվում ու անհայտանում, նորից հավաքվում և նորից ու նորից հալվում — գետն անցնելու յեր պատրաստվում Իվանովո-Վոզնեսենսկիյ գունդը։ Փոքրիկ շոգենավերը լցվում եյին այնքան մարդ, վոր այլևս ազատ տեղ չեր մնում։ Մի մասը տանում եյին — գալիս եյին մյուսներին տանելու, նորից տանում եյին — և նորից վերադառնում։ Այսպիսով խավարում, լուսթյան մեջ տեղափոխեցին ամբողջ գունդը։ Արդեն վարուց անցել եր կես-գիշերը, մոտենում եր լուսաբացը։

Այդ ժամանակ Կրասնիյ Յարից բատարեյները կրակ բաց արին։ Խփում եյին թշնամու մոտակա խրամատներին, վոր շրջապատել եյին այն ողակը, վորը այդ տեղում կազմում ե գետը։ Միանգամբից հարվածեցին մի քանի տասնյակ հրանոթներ։ Նշանադրությունը չափված եր առաջուց և արդյունքը խւկույն յերևան յեկավ — այդպիսի կրակի տակ անմըտություն եր մնալ խրամատներում և թշնամին տատանվեց և սկսեց անկարգ վաղեվագ տեղափոխվել գեպի խրամատների հետեւյալ գիծը։ Յերբ այդ մասին հայտնեցին հետախույզները, արտիլերիան լոեց, և իվանովո-վոզնեսենցիք հարձակման գնացին — և քշեցին մինչեւ նովիյե Ծուրբասլի գյուղը։ Թշնամին խուճապով նահանջեց, վիճակի չլինելով ճանապարհին գոնե մի տեղ ամրանալու։ Նահանջողներին կը ընկոխ։ Ծուրբասլի մտան իվանովո-վոզնեսենցիք…։ Այս տեղ կանգ առան, — պետք եր սպասել մինչև գետն անցնի մի վորեւ ոգնություն, մի գնդին չափազանց խորունկ մտնելը ծայր աստիճանի վտանգավոր եր։ Ամրացան գյուղում։ Իսկ այդ միջոցին պուղաչովցիք ավերով առաջ եյին խաղում դեպի Ալեքսանդրովկա։

Բարձվում եյին ու տեղափորվում շոգենավերում բաղինցիք և դոմաշկինցիք, — նրանք պետք ե անմիջապես ոգնության շարժվեյին հեռացած գնդերին։ Գետն անցան չորս զրահակիր, սակայն նրանցից յերեքը միաժամանակ շուռ յեկան և կանդնած մնա-

ցին խճուղու վրա։ Հետո հեծելազորը բարձրացրեց
այդ զրահակիրները, վոտքի կանգնեցրեց, գործի դրեց...

Այդ միջոցին դեպի վեր յետ մղված թշնամին
հավաքեց ուժերը և հարձակվեց իշխանովովովովնեսեն-
սկիյ գնդի վրա։ Արդեն առավոտյան ժամը յոթը-
ութը կլիներ։ Տուրքասլի գյուղում կանգնելու և թշշ-
նամու ցուցարարական գրոհների դեմ հրացան պառ-
պելու, թշնամուն գյուղի այն կողմը քշելու ժամա-
նակ — իշխանովցիք ծախսել եյին բոլոր փամփուշտ-
ները և այժմ մնացել եյին գրեթե ճեռնունայն, առանց
մտակա մատակարարման վրա հույս ունենալու,
հիշելով Յելանի, այստեղ ամբողջ մերձգետյան գլուպ-
պայի հրամանատարի հրամանը՝

«Չնահանջել, հիշել, վոր ոեզերվում միայն սին-
ներ կան»։

Այս, նրանց, ջուրհակներին այժմ բացի սվիննե-
րից վոչինչ չի մնում։ Յեվ ահա, յերբ ցուցարարական
գրոհների փոխանակ թշնամին սկսեց իսկական ծա-
վալուն հարձակում — տատանվեցին շղթաները, չդի-
մացան մարտիկները, յետ-յետ գնացին։ Այժմ գնդի
հրամանատար եր վաղեմի ծանոթ — Բուրովը՝ նրան
կոմիսարական պաշտոնից տեղափոխել եյին այստեղ։
Նրա մոտ կոմիսար եր — Նիկիտա Լոպարը։ Նրանք
սկանում են ամբողջ ճակատի յերկարությամբ, գո-
ռում են, վոր նահանջողները կանգ առնեն, արագ-
արագ բացատրում են, վոր միննույն և փախչելու
ճանապարհ չկա — յետեւմ գետն և, փոխադրել ան-

հնարին ե, վոր պետք և կանգ առնել, ամրանալ, ըն-
դունել զրոհը։ Յեվ մի պահ տատանված մարտիկ-
ները կանգ առան, դադարեցին նահանջելուց։ Այդ
իսկ ժամանակ շղթաներին արագ մոտեցան մի քանի
ձիավորներ։ Նրանք ցած թռան ձիերից։ Դա — ֆրուն-
զեն ե, նրա հետ բանակի քաղբաժնի պետ Տրալինը,
մի քանի մոտիկ մարդիկ... Ֆրունզեն հրացանը ձե-
ռին տուաջ վազեց՝ «Ուռա! Ուռա! Ընկերներ! Սուաջ!»։
Բոլոր մոտ կանգնածները ճանաչեցին նրան։ Կայծակի
արագությամբ լուրը անցավ շղթայից շղթա։ Մար-
տիկները լցվեցին վոգնորությամբ, նրանք կատաղի
առաջ նետվեցին։ Բացառիկ վայրկյան եր! Սակավ-
սակավ եյին կրակում, փամփուշտները քիչ եյին,
ոլանում եյին սկիններով հարձակվող թշնամու վոհ-
մակների վրա։ Յեվ այնքան մեծ և հերոսական վոգե-
վորության թափը, վոր այժմ տատանվեցին թշնա-
մու շղթաները, շուռ յեկան, փախան... Յելանը իր
զինվորներին ուղարկեց, վորպեսզի նրանք անբաժան
գտնվեն ֆրունզեյի մոտ, կարգադրեց՝

«Յեթե սպանեն նրան, ինչ կուզե լինի, դուրս
բերել կովից այստեղ, գետը անցնելու տեղի մոտ,
շոգենավի մոտ»։

Սայլակներով արդեն շտապ բերում եյին ափից
փամփուշտները։ Մոտ եյին բերում սողալով, հենց վոր
Տուրքասլի գյուղի այն կողմը շղթաները պառկեցին։
Յերբ գրոհի տլացան, գնդակը խփեց ուղղակի Տրալ-
լինի կրծքին ու վայր գցեց։ Նրան գրկեցին ու թե-

վերի տակ անցած, դուրս բերին կովի դաշտից։ Այժմ
այն տեղում, վորտեղ փոքրիկ մահացու վերքն եր,
վառվում ե կարմիր դրոշի շքանշանը։

Յեկումը կատարված եր, դրությունը վերականգ-
նած։ Ֆրունզեն թողեց գունդը և Յելանի հետ մեկ-
նեց ուրիշ գունդ, պուգաչովցիների մոտ։ Բարձրանում
եյն բլրակների, բլուրների վրա, դիտում եյն տեղը,
խորհրդակցում եյն, թե ինչ կերպ ավելի լավ իրա-
գործեն ոպերացիան, նորից ուսումնասիրում եյն
քարտեզը, տնտղում մանրազնին ամեն մի կետ, հա-
մեմատելով նրա հետ այն, ինչ վոր այստեղ իրոք
տեսնում եյն։ Պուգաչները շարունակում եյն շարժ-
վել ափի մոտով։ Սկսում եյն մատենալ բազինցի-
ները և Դոմաշկինսկիյ գնդի բատալյոնները։ Նրանք
շարվում եյն խճուղու ուղղությամբ։ Կեսորին հրա-
ման եր տրված հետագա ընդհանուր հարձակման։
Պուգաչովցիք պետք ե ընթանային ափով, բազին-
ցիք և Դոմաշկինսկիյ գնդի բատալյոնները — կենտ-
րոնում, իսկ ծայրանեղ ձախ թերից — իվանովո-վոդնե-
ստնցիք։ Նրանք այդ միջոցին արդեն գրավել եյն Ստա-
րիե Տուրբասլի գյուղը և կանգ եյն առել հանգստա-
նալու։ Հենց այդ միջոցին յերևացին թշնամու գնդերի
դրաշարքերը, նրանք հյուսիսից կախվեցին հարվա-
ծելու իվանովո-վոգնեսենցիներից այն կողմ — հար-
ձակման պատրաստ գրուպպայի կենտրոնի գեմ։

— Գուցե այդ նախիրներ են, — յենթադրում եյն
փոմանք։

— Ի՞նչ նախիրներ, չես տեսնում, շողում են սկին-
ները! — նկատում եյն նրանց։

Յերեմիմը եր արդյոք սկինների շողումը — դը-
վար եր ասել, բայց արդեն վոչ վոք չեր կասկածում,
վոր շարժվում են թշնամու գնդերը, և վոր այդ կովից
շատ բան և կախված։ Ֆրունզեն ուզում եր մասնակցել
այս կովին ևս, բայց Յելանը նրան խնդրելով համոզեց,
վոր նա գնա գեպի գետանցքը և փութացնի մյուս զի-
վիզիայի գնդերի փոխադրությունը։ Համաձայնվեցին,
վոր այդպես ավելի լավ կլինի և ֆրունզեն սլացավ
գեպի գետանցքը։ Շուտով սպանվեց նրա տակի ձին և
ինքը խիստ կոնտուզիա ստացավ մոտը պայթած ուռմ-
բից։ Սակայն և կոնտուզիայով հանդերձ նա այստեղ,
ափին չլքեց աշխատանքը, — փութացնում եր, ոգնում
խորհուրդներով, փոխադրում եր այնտեղ արտիլե-
րիայի մի մասը։

Ամենից առաջ իվանովո-Վոզնեսենսկիյ գնդին մո-
տեցրեց իր բատարեյան Խըերտովը։ Նա կանգնեց
շղթաների յետել և թշնամու հենց առաջին զրոհի ժա-
մանակ, յերբ շղթաները քարացան վայրի փետացած
սպասման վիճակում, կրակ բաց արեց։ Յեկ մար-
տիկները, լսելով իրենց բատարեյի դորդը, ցընց-
վեցին ուրախ, շարժվեցին առաջ...

Հարձակումը զարգացնել չհաջողվեց — բազինցի-
ների և դոմաշկինցիների բատալյոնների վրա ծանր
իջավ այն ահապին մասսան, վոր շարժվում եր հյու-
սիսից։ Զափից դուրս անհավասար եյն ուժերը, չա-

փից դուրս գժվար եր զիմաղրել և հաղթահարել այդ գրոհը, — բազինցիք յերերացին, նահանջեցին: Մի բատալյոնում իրարանցում առաջացավ, — այնտեղ քիչ եյին հին մարտիկները, ավելի շատ եյին թարմ, անսպավոր նորեկները: Այդ բատալյոնը պոկլ յեկավ տեղից և վաղեց դեպի տփը, նրան հետեւեցին մյուս բատալյոնի առանձին մարտիկները: Մնացածները դանդաղ նահանջում եյին, զիմաղրելով հետապնդող թշնամուն: Իվանովովոզովնեսենցիք ուշացել եյին, մնացել Տուրբասլի գյուղի մոտ: Այժմ թշնամու ուժերի մի մասը հարձակվեց նրանց վրա: Յելանը սլացավ դեպի Խրեբտովը:

— Բազինցիք, Խրեբտով, նահանջում են, պետք ե ոգնել! Դարձրել թնդանոթները, հարվածիր դեպի աջ այն մասերին, վոր հետապնդում են նահանջողներին:

Յեվ Խրեբտովը սկսեց թնդանոթաձգությունը: Սովոր տեսողությունը, կուանման ուժը և փորձված արտիլերիստի հմտությանը հրաշք կատարեցին՝ ոռումբռումը յետելից, ոռումբը ոռումբին կռնկու թշնամու խտության մեջ, թշնամու շարքերի սրտին... Այնտեղ շփոթվեցին, դադարեցին հետապնդումը, մնացին կանգնած, քիչ-քիչ սկսեցին նահանջել, իսկ կրակը հետպատճենում եր, ոռումբերը ավելի հաճախ, և այնպես ել ստույգ, իջնում եյին և հնձում թշնամու շարքերը: Հարձակումը կասեցված եր: Բազինցիք ցնցվեցին, առույգացան... Այդ միջոցին Միխայլովը դեակ մյուս ափի վրա ոգնում եր Զապայելին փոխա-

դրելու գործում: Յերբ նա տեսավ, վոր ափի մոտ հավաքվեց կարմիր բանակայինների հոծ բազմություն, հասկացավ, վոր գործը լավ չի գնում, վաղեց Զապայելի մոտ, ուղում եր զեկուցել, բայց նա արդեն ամեն ինչ գիտեր — քիչ առաջ հեռախոսով նա ամեն ինչի մասին խոսել եր Յելանի հետ:

Հենց ուղում եր Միխայլովը պատմել իր տեսածի մասին, իսկ Զապայելի արդեն հրամայում ե՝

— Լսիր, Միխայլով! Հենց նոր մենք բարձեցինք մի բատալյոն և... Այնտեղ ուժեր են հարկավոր... Դա դեռ քիչ ե... Պետք է յետ մզել դրանց ափից..., հասկացամբ... նրանցից — միայն կորուստ ե: Գնա, յետ բեր նրանց քեզ հետ: Հասկացամբ:

— Այո, անպայման:

Յեվ Միխայլովը արդեն հակառակ ափին ե: Նա շատ չի խոսում, ժամանակ ել չկա յերկար ու բարակ խոսելու: Փախչողներից վոմանց մարակով, վոմանց ատրճանակով պահեց, կանգնեցրեց, գոչեց.

— Զհամարձակվես փախչել! Ուր, ուր եք փախչում: Կանգնիր! Միակ փրկությունն ե — առաջ շաժվել! Հետեւիր ինձ, վոչ մի խոսք: Ով փորձ կանի փախչելու — գնդակը զլիքին կղիպչի! Հարեան, այլպես ել գնդակիր! Հետեւեցեք ինձ, ընկերներ, առաջ!!!

Այս պարզ և այդ բոպեյին անհրաժեշտ խոսքերը ցրեցին խուճապը: Փախչողները կանգ առան, դադարեցին ափի վրա շրջելուց, խոնվեցին, նայում եյին, նայում Միխայլովի վրա և տարակուսորեն, և անվստահ, և հույսով:

«Գուցե դու իրոք փրկես, ահեղ հրամանատար»!

Այս, նա նրանց փրկեց։ Այդ վայրկյաններին կարելի յեր գործել միայն մտրակով և գնդակով, նահաղթեց և տարավ նրանց իր յետեկից։ Շարեց, ինչպես վոր հարկն ե, ամբոխը նորից վերածեց կազմակերպված զորքի։ Յեվ այժմ, յերբ նրանց հետ մոտենում եր դոմաշկինցիների և բազինցիների նահանջող յերկու բատալյոններին, նրանք ցնցվեցին ուրախությունից, գոչեցին։

— Ոգնությունն ե գալիս, ոգնությունն!

Այդպիսի ըոպեներում բացատրել սխալները վոճառգործություն կլիներ, նրանց այդպես ել հավատացրին, վոր իսկապես լրացնում ե մոտենում։ Բատալյոնները յետ դարձան, հարձակման գնացին... Բայց հաղթանակ չկար այստեղ։ Նոր եր հաջողվել յետ մղել թշնամուն, և յերբ յետ մղեցին, նրա զըլխավոր ուժերը դարձան իվանովո-Կողնեսենսկիյ գնդի վրա։ Այդ գունդը ծանր հարվածի տակ ընկավ, սակայն դիմադրեց թշնամու մի քանի գնդերի չորս իրար հաջորդող զրոններին։ Այստեղ յերկան եյին բերված արտասովոր հերոսություն և տոկունություն։ Հանդուրժեցին, դիմադրեցին, չնահանջեցին, մինչև վոր ոգնության հասան իրենց գնդերը և թեթևացրին դժվարագույն կացությունը։


Ափով հեռացած պուգաչովցիներին, նրանց չանջատելու համար, պետք եր յետ քաշել։ Յերբ հրամանը տրված եր և նրանք սկսեցին հեռանալ — մինչ այդ

լուած ե, ըստ յերեսութին, նրանց առաջ քաշել ցանկացող թշնամին, սկսեց հաջորդաբար մի քանի յեռանգում գրոհներ։ Պուգաչովցիք նահանջում եյին, կորուստներ տալով... Ընդհարվում եյին, դիմադրում, սակայն հակահարձակման չեյին զիմում — շտապում եյին շուտ հասնել իրենց գնդերի գծին։

Յեվ յերբ բոլոր գնդերը նորից յետ եյին քաշված դեպի խճուղին, լուր յեկավ այն մասին, վոր Զապայեվը գլխից վիրավորված ե, վոր գիշիզիայի հրամանատարությունը հանձնվում է Յելանին։ Ծանր լուրը արագ անցավ գնդից-զունդ, բոլորին ծանր հուսալքության մեջ գցելով։ Թեկուզ և մարտիկները այստեղ, կովի մեջ չեյին տեսել Զապայեվին, սակայն գիտեյին, վոր նա այստեղ ե, վոր բոլոր այդ գրոհները, հարձակումներն ու նահանջները չեն կատարվում առանց Զապայեվի գիտության։ Յեվ վորքան ել ծանր լիներ կացությունը, հավատում եյին նրանք, վոր յելք կիբնի, վոր ծանր կացությունը կանցնի, վոր Զապայեվի ու Յելանի պես հրամանատարները դեպի կորուստ չեն տանի։

Լոելով Զապայեվի վիրավորվելու մասին, ամենին, կարծես, լոեց, ամբոք... Այդ միջոցին հարձակումը արդեն դադարել եր, մթնշաղը ընդհատել եր հրացանաձգությունը։ Ամեն ինչ լոել եր։ Գնդերում լուսություն եր տիրում։ Բոլոր կողմերում կանգնած են պահակները, ամենուրեք ուղարկված են հսկչներ։ Գնդերը հանգստանում են։ Առավոտյան, լուսարցացի դեմ, նշանակված ե բնդիհանտէք հարձակում։

2-1078 1045
46



ՀԱՅԱ - ՕՀՏԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

* *

Գետը անցնելու գործողություններին ներկա յեղած ժամանակ Զապայեվը յուրաքանչյուր տաս բոպեն մի անդամ խոսակցում եր հեռախոսով կամ Յելանի, կամ գնդերի հրամանատարների հետո Յերեվելի կապ եր կազմակերպված — առանց այդպիսի կապի ոպերացիան չեր իրագործվի այդպիսի հաջողությամբ։ Զապայեվը մշտապես և ճիշտ գիտեր այն կացությունը, վոր ստեղծվում եր գետի այն կողմը։ Յեկ յերբ այնտեղ սկսում ելին հուզվել ուումքերի կամ փամփուշտների պակասելու առթիվ, Զապայեվը արդեն գիտեր այդ կարիքի մասին և առաջին իսկ մեկնող շոգենավով ուղարկում եր այն, ինչ անհրաժեշտ եր։ Անընդհատ հետաքրքրվում եր գնդերի տրամադրությամբ, թշնամու ակտիվությամբ, նրա դիմադրության ուժով, արտիլերիայի մոտավոր քանակությամբ, սպաների քանակով, զորքի կազմով առհասարակ — այդ բոլորը նրան զբաղեցնում եր, այդ բոլորը նա կշռում եր, բոլորը հաշվի առնում։ Շարժման թելերը նա ամեն մի ըոպե իր ձեռքին եր պահում և նրա հեռախոսով տված հակիրճ խորհուրդները և սուրճանդակների հետ ուղարկած կարգադրությունները, — այդ բոլորը ցույց եր տալիս, վոր նա պարզորոշ ներկայացնում եր իրեն բոլոր հանդամանքները ամեն մի առանձին մոմենտին։ Առժամանակ նրան շփոթեցին թշնամու սպառնակները, սակայն այս դեպքում ևս վոչ թե շփոթությունը, այլ ցասումը համա-

կեց նրան. մեր ողաչուները բենզին չունեյին, նրանք չեյին կարող բարձրանալ համդեպ թշնամու սպառնակների, կայծակ-վորոսները այստեղ չեյին կարող ոգնել։ Մեր ապարատները այդպես ել մնացին անգործության մեջ։ Ափի վրայի ամբողջ աշխատանքը հարկադրված եյին կատարելու թշնամու սպառնակներից նետած ու պայթվող ոռումքերի, սպառնակների գնդացիքների գնդակների տարափի տակ... Բայց վոչինչ անել չեր կարելի... Շուտով թնդանոթների կրակով ստիպեցին թշնամու ողաչուներին ավելի վեր բարձրանալ, բակայն նրանք չեռացան։ Սավառնակներից կատարված այդ հրաձգությունը շատ վնասներ հասցրեց մեզ։ Այդ հրաձգության ժամանակ վիրավորվեց և Զապայեվը։ Դնդակը ծակել եր նրա գլուխը և դեմ առել վոսկրին... Դնդակը հանում ելին — և վեց անգամ չեր հաջողվում։ Նստած եր։ Լուռ եր։ Առանց մի ծպտունի տանում եր տանջանքները։ Վերը կապեցին, տարան Զապայեվին Ավդոն — Ուֆայից քանի վերստ հեռավորության վրա մի գյուղաքաղաք։ Այդ տեղի ունեցավ 8-ի յերեկոյան դեմ, իսկ 9-ի առավոտյան նշանակված եր ընդհանուր հարձակումը։

Համառ աշխատանքը ափի վրա, արտիլերիստների բացառիկ աշխատանքը, կապի կատարելությունը, արագ յեռանդուն փոխադրությունը շոգենավերով, — այս բոլորը ապացույց եր այն կանոնավորության, այն կազմակերպվածության և համերաշխ յեռանդուն գործակցության, վորով տարվում եր ամբողջ ոպե-

բացիան։ Այստեղ առանձին անձնավորության յերախտիք չկար, այստեղ յերեան յեկավ հաղթելու կոլեկտիվ կամքը։ Այդ կամքը արտացոլվում եր ամեն մի կարգադրության, ամեն մի իրագործման, ամեն մի առանձին փայլում, և հրամանատարի, կոմիսարի, շարքային մարտիկի ամեն մի գործողության մեջ։

Ուշ յերեկոյան Յելանի մոտ բերին թշնամուց փախած մի բանվորին Նա հավատացնում եր, վոր վաղ առավոտյան գրոհելու յեն յերկու սպայական բատալյոն և Կապակելեվսկի գունդը, նրանք հարձակվելու յեն պուգաչովցիների վրա, վորպեսզի այստեղ ճեղքվածք առաջացնելով, անջատեն մնացած գնդերը և, շրջապատելով նրանց, վոչնչացնեն, իրենց այլ՝ հյուսիսի ուղղությամբ կանգնած մասերի ոգնությամբ։ Բանվորը յերդվում եր, վոր ինքը Ուֆայի գործարանի բանվոր ե, վոր ինքը համակիր ե խորհրդային իշխանության և փախել ե, կյանքը վտանգի յենթարկելով, բացառապես իր կարմիր ընկերներին սպառնացող վտանգի մասին նախազգուշացնելու մտադրությամբ։ Տեղեկությունները նա ստացել ե միանգամայն պատահաբար, նա աշխատել ե այն տան մեջ, վորտեղ տեղի յե ունեցել խորհրդակցությունը։ Նա յերդվում եր, վոր ասում ե միայն ճշմարտությունը, և ինչով ասես պատրաստ ե հաստատելու իր խոսքերը։ Նրան և հավատում եյին, և չեյին հավատում։ Համենայն դեպս Յելանը յետաձգեց իր հարձակումը մի ժամանով։ Ուժեղացրեց պահակները։ Պատրաստվեցին

դիմավորելու տասնյակ գնդացիրներով։ Բանվորին ձերբակալեցին, հայտարարեցին, վոր նրան կգնդակահարեն, յեթե նրա տված տեղեկությունները սուտ դուրս գան և սպիտակների կողմից վոչ մի հարձակում չլինի...

Տանջակի յերկար եր տեսում գիշերը։ Այդ գիշեր հրամանատարներից գրեթե վոչ վոք չքնեց, չնայած ծայր աստիճանի հոգնածության։ Բոլորին հաղորդված եր այն, ինչ վոր պա ոմել եր բանվորը։ Բոլորը պատրաստ եյին դիմավորելու թշնամուն։ Յեկ ահա ժամանակը վրա հասավ։

Աև զորաշարքերով, կամաց-կամաց, առանց մարդկային ձայնի, առանց զենքի շաշյունի հարձակման եյին գնում սպայական բատալյոնները Կապակելեվսկի գնդի հետ... Նրանք փովել եյին ամբողջ դաշտով մեկ և ընդգրկել եյին մեկից տհագին տարածություն։ Յերեկ միտք ունեյին լոելայն ընդհուպ մոտենալ հոգնած, քնաթաթախ շարքերին և հանկարծակի հարվածով թրատել, գնդակել, խուճապ բարձրացնել, վոչնչացնել...

Այդ հանդիպումը սարսափելի յեր... Բատալյոնները խիստ մոտ թողին, և մեկից ըստ հրամանի, գոգուացին տասնյակ պատրաստի գնդացիրները... կափկափեցին, հնձեցին... Շարքեր պառկեցըրին մեկը մեկի յետեկց, վոչնչացնում եյին։ Վեր թռան խրամատներից, մանրիկ փոսերից մարտիկները և ձգվեցին առաջ։ Շարքերով պառկած եյին հնձված սպայական

բատալյոնները, խուճապով փախչում եյին կապահելեցիք — նըանց հետապնդում եյին մի քանի վերստ... Այդ անսպասելի հաջողությունը թևավորեց գնդերը ամենավառ հույսերով:

Բանվորին ազատ թողին և առոք-փառոք ուղարկեցին դիվիզիա, դիվիզիայից, կարծեմ, բանակ...

Այս բոլորի մասին հետո Յելանը մանրամասն պատմեց Ֆյոդորին (նա կամուրջի մոտ եր Պոպովի բրիգադի հետ). պատմում եր և այն մասին, վոր այդպիսի հաջողությունից հետո զորամասերը շարժվում եյին առանց կանգ առնելու և հաղթաբար. 9-ի յերեկոյան արդեն Ուֆայի մոտ եյին:

* * *

Բաժանվելով Զապայեվից, Ֆյոդորը մի քանի ընկերների հետ գնաց դեպի այն կողմը, ուր փոփած եր Պոպովի բրիգադը. Ուֆայի ավազուտ սարը Ավգուստի կողմից յերեսում եր գեռ քսան վերստ հեռափորությունից. Լանջի վրա սկ կետերով յերեսում եյին շենքերը, արևի տակ հրավառվում եյին յեկեղեցիների վոսկյա գագաթները. Աբագ սլացան, դուրս յեկան լայնարձակ մի բացատ. Այստեղ եր հասնում արդեն թշնամու հրետանիների կրակը, բացատը յերեսում եր, ասես ձեռքի ափին, և յեթե մի վորեե շարժում եր նկատում — կրակ եր բաց անում. Խմբով դուրս չեկան, մեկը մյուսի յետից յոթանասուն քայլ հեռափորության վրա արագ-արագ սլացան դեպի բրիգադի

շտաբը. Անցան յերկաթուղու գիծը, — այստեղ գծի այս ու այն կողմը թափված եյին ըելսերի վրա շատ վառված, կոտրաված ու ջարդված վագոններ. Վորտեղ վոր մի բլրակի յետեից արտիլերիան հարվածում եր Ուֆա քաղաքը, անտառից այն կողմ կափկափում եյին խոսուն գնդացիրները:

Յեկան Պոպովի մոտ. Նա կանգ եր առել մի փոքրիկ կիսակայանում, վորը ափից յերկու-յերեք վերստ հեռափորության վրա յեր գտնվում: Այստեղ հենց խորհրդակցում եյին հրամանատարները — քննում եյին հակառակ ափին անցնելու լավագույն միջոցները... Վորոշեցին գետն անցնելու գործը միանգամայն յենթարկել յերկու այլ բրիգադների առաջխաղացության — և անձնատուր չլինել վոչ մի գայթակղության, — չնետվել, ասենք, կամուրջով անցնելուն, վորի մասին գրեթե բոլորը հավատացած եյին, վոր նախապատրաստված ե սլայթելու: Խորհրդակցեցին և գետն անցնելու միջոցների մասին — այդ միջոցները չկային: Սկսեցին վորոնել այդպիսի միջոցներ բոլոր ուղղություններով և իրոք վորոշ արդյունքներ ստացան:

Բելայա գետի ափին կանգնած են յերկու տնակի խրճիթներ. այստեղ հաստատեցին հեռազիրը, անցրին հեռախոսային լարերը: Խոտերի մեջ, ափի վրա, կամուրջի յերկու կողմից, պառկեցին գնդերը: Նրանց յետեր, անտառից այն կողմ, կանգ առան բատարեյները: Հենց այդ գիշեր վորոշեցին շոշափել թշնամուն, վերջնականապես առ դեկանալ կամուրջի մա-

ւին, իրոք, արդյոք, ականված ե, թե վոչ (բրիգադը տեղեկություն եր ստացել, վոր Ռւֆայի բանագործը թույլ չեն տալիս սպիտակ զորքերին այդ կամուրջը վոչ սլայթեցնել և վոչ ել — պատրաստել պայթեցման): Ժամը տասնմեկին, յերբ արդեն բոլորովին մութ կլինի, պետք ե ժամանի բանվորների առաջավոր խումբը, նրանք կանչված են վագոններով պատաճ կամուրջը ուղղելու և կարգի բերելու քանդված գծերը .. Ահա ժամը արդեն տասնմեկն ե, տասներկուսն ե... Խումբը դեռ չի յերևում! Նա յեկավ միայն ժամը 2-ից հետո, յերբ արդեն նոսրանում եր նախարշալուսյան մթնշաղը... Յեկ հենց խմբի մոտենալը իմացվելուց անմիջապես հետո արտիլերիան անտառի այն կողմից սկսեց «մաքրել» աշխատանքի ճանապարհ — բատարեյները մեկից կրակ բացին ամբողջ ափի տարածության վրա, աշխատելով դուրս քշել թշնամուն խրամատների առաջին գծից, խուճապ բարձրացնել և հեռացնել թշնամու ուշադրությունը բանվորական խմբից: Սակայն այս համեմը չարդարացավ: Թշնամին մեր արտիլերիայի կրակին պատասխանեց ավելի հաճախակի, տաք կրակով, և յերբ առաջին մուրճը թակեց բելոր, ափից զղբացին ծանր թնդանոթները: Թշնամին նշան է վերցնում յերեւլի, ծայր աստիճանի ստուգած, — յերեւմ եր, վոր կարմիր հյուրերին սպասելու ժամանակ սպիտակ զորքերը այստեղ բավականին գործնական փրձեր են արել և լրջորեն պատրաստվել են

այս հանդիպման: Առաջին յերկու ոռւմբը ըսկան առաջի քարե սյան մոտ, ասես շոշափելով պետքական աեղը և հրե ուղեցույցներով նշելով այն տեղը, ուր ընկնելու յե յերբորդ ոռւմբը: Նշված եր ստույգ՝ յերբորդ ոռւմբը խփեց ուղղակի կամուրջի առաջին արանքի կոճերին: Դղրդյունով փշրվեցին բելսերը, չորս կողմ թռան կոճերի կտորտանքները: Բանվորները յետ թռան... Նրանց այդպես ել չհաջողվեց առաջ անցնել դեպի առջեռում սեին տվող վագոնները: Հենց նոր եյին նրանք յետ թռել — սկսվեց շտապ ու ստույգ մի հրաձգություն վորոշ կետերի վրա: Ռումբերը միշտ ընկնում եյին կամուրջի վրա, հենց կոճերի և ըելսերի վրա, և շատ շուտով այլանդակեցին գիծը: Բանվորների խումբը յետ քաշեցին դեպի տնակը, ապա նորից վերադարձին, և աշխատանքը, թեև ընդհատումներով, բայց առաջ շարժվեց:

Յերբ հրաձգությունը կենտրոնացավ կամուրջի այն կողմը, մյուդորը, Զոյա Պավլովնան, յերկու սանիտարունի և մոտ քսան մարտիկ բարձրացան սանդուղքով, աստիճանների վրա հողաթմբի լանջով տեղավորվեցին... Հանկարծ նրանց գլխի վերեր պայթեց ոռւմբը և նրանք բոլորը թափագլոր ցած գլորվեցին: Այս անգամին հաջող եր — վիրավորված եյին միայն յերկուսը. սանիտարունիները նրանց վերքերը հենց տեղնուտեղը կապեցին, սակայն տղերքը չհեռացան, մնացին իրենց տեղերում: Յերբ գետնից բարձրացան, բնագդաբար մղվեցին դեպի տնակը, պահվեցին նրա

յետեր, պատի մոտ կուչ յեկած... Ռումբերը դժմում
եյին ու խոռում, տնքում, պատվում եյին գլխի վերել,
իսկ յերբ պայթում եր շրապնելը, նրա կտոր-
ները լցնում եյին խրճիթը, թակում եյին տանիքը,
յերբեմն ծակում եյին տանիքը, յերբեմն յետ թռչում
ու շրիկում գետին, վոտքերի մոտ։ Առաջին պահ
կարծես վոսկրացել եյին, կանգնած եյին կիսակեն-
դան, լուռ։ Մեր հրանոթներն ել ոլանում եյին ան-
տառայեզրից մեր գլխի վրայով, և բոլորը ագահաբար
լսում եյին նրանց ականջ ծակող դժոցն ու շվոցը,
և ավելի ուշիմ լարում եյին լսողությունը, յերբ թռչում
եր թշնամու հրանոթը։

«Այստեղ կընկնի թե այս կողմ», տանջում եր
ամեն մեկին՝ սարսափելի միտքը։

Իսկ դժոցը մոտենում է, զորեղանում, դառնում
ե ահարկու, ականջ ծակող կրճտում... Ասես, ինչ վոր
հսկայական չուզունե շերտեր մեկը մյուսին են
քսվում ավելի ու ավելի արագ, և նրանք ճշում եյին
ու տնքում, ու կրճտում իրենց անտանելի չուզունե
կրճտումով...»

«Մեր վրա յե — թե կանցնի...».

Յեվ հանկարծ դժոցը հենց գլխի վերեն եւ Ահա
նա թափանցեց ուղեղը, սառեց ականջներում, իբրև
փոթորիկ սլացավ մկաններում, արյան մեջ, նյար-
դերում, ստիպեց նրանց դողալ մանրիկ ու հաճախակի
մի դողով։ Յեվ բոլորը ակամա արագ շարժումով գլուխ-
ները ուսերի մեջ են քաշում, թեքվում են մի կողմ,

ավելի սերտ կպչում են իրար, դեմքերը ծածկում են
ձեռքերով, կարծես թե ձեռքի ափերը կարող են փրկել
նրանց յեռացած արագաթիո ռումբից... Խլացուցիչ
հարված։ Բոլորը ցնցվում են և այդպես ել վոսկրա-
ցած, առանց մարմնի վորեւ մի մասը շարժելու, կանգ-
նած են մնում ամբողջ մի բողեք, կարծես սպասելով,
վոր պայթյունից հետո պիտի հետեւ ելի մի ինչ վոր
բան, և մինչեխսկ ավելի սարսափելի, քան այդ ահեղ
հարվածը։ Տանիքը թակում են կտորտանքները, նրանք
շրջում են տերևներում, կոտրատում են ճյուղերը,
շրփում են գետին, վոլորելով փութանցիկ արագ
մրրիկներ։ Զապված շնչառության, գերեզմանային
լոռության վայրկյաններ, և ապա վորեւ մեկը շարժ-
վում ե և գեռ անհաստատ ձայնով կատակում։

— Անցավ... Ծխեք, տղերք...

Զարմանալի յե — սակայն այդ ահեղ վայրկյան-
ներից հետո խոսակցությունը գրեթե միշտ վերսկս-
վում ե հանաքով և գրեթե յերբեք այլ ինչով։ Հետո
լոռում են և նորից կանգնած սպասում են նոր պայ-
թյունների։ Այդպես յերկար, յերկար ժամերի ընթաց-
քում, մինչև լույս... Մի քանի անգամ վազե վազ յե-
կավ Պոպովը հարեան խրճիթից, նրա մոտ եր վազում
դեպի այդ խրճիթը և Ֆյոդորը, իսկ հետո նորից մեկ-
նում եր որապահության... Բայց և այնպես չեր թող-
նում հանգուգն մի միտք՝ յեթե հաջողվի վորոշել, վոր
կամուրջը միանգամայն անվասա ե, — քաղաք ներս
խուժել գոնե մի գնդով և միայն արշավի հանկարծա-

կիությամբ խուճապել, ողնել կրասնից Յարից յիկող բրիգադներին:

Լույսը բացվելուն պես հրաձգությունը դադարեց... Տեղափոխվեցինք այն կիսակայնը, ուր տեղափորվել էր շտաբը: Անքուն գիշերից տանջված — մենք շատ շուտ քուն մտանք: Իսկ մթնշաղին — նորից դեպի կամուրջ, նորից սկսեցինք շոշափել՝ անմաս ե թե վոչ: Հետախույզները հասան արդեն մինչև մեջտեղը, սակայն նրանց նկատեցին ու գնդացիրային կրակով հետապնդեցին... Ֆյոդորը գնդի կոմիսարի հետ նույնպես գնաց դեպի կամուրջի վրայի վագոնները: Առաջ անցնելով մոտ յերկու հարյուր քայլ, նրանք «Ինտերնացիոնալը» յերգեցին: Ըստ յերեսույթին, տարրորինակ մի զգացմունք եր պատել Կոլչակի բանակի գինվորներին, — նրանք չեցին կրակում: Ֆյոդորը ամբողջ ուժով գոռաց կամուրջից

— Ընկերներ!..

Յեվ այդ գոռումից անմիջապես նորից գործի անցան գնդացիրները: Ընկան ռելսերի վրա և սողացին... հաջող անցավ: Նրանք հասան վերջին արանքին, բարձրացան սանդուխքով, իշխան խօսիթը: Գնացին ափով, ուր տեղափորված եյին շղթաները... Խոտերի մեջ ամեն կողմ ցրված եյին մարտիկները, վոմանք յետ եյին քաշվել անտառը, այնտեղ ծխում եյին, հավաքվում փոքր խմբակներով. վոմանք ել փորսող տալով աճապարում եյին դեպի ջուրը, լցնում եյին անոթները, վերտպառնում եյին ու դատարկում մեկը մյուսի

յետերից, խմում եյին, հացը կրծելով, փոխեփոխ իրար տալիս: Նրանց միշտ կարելի յեր տեսնել, ինչպես ցածեն իջնում ափով, գլուխը պահելով սուր և չոր բոշի մեջ, քթի առաջ ճոճելով մինչ ափերը լի անոթը:

Այս գիշերը նման եր նախորդ գիշերին: Լույ յեկավ, վոր հակառակ ափին կրասնից Յարից առաջ են շարժվել յերկու բրիգադ, ասել ե, այստեղ ել ինչ վոր մի վճռական բան պիտի տեղի ունենա: Մեկը մյուսի յետերից հետախույզ խմբերը փորձում են անցնել մյուս ափը, կամ գոնե ճանապարհը փակող վազոնների կողմը, բայց թշնամին աշալրջորեն հետամուտ ե ամեն մի ձեղի, պաշտպանում ե ամեն մի ծակ, վորտեղից վոր հնարավոր ե անցնել... Մութ, շատ մութ գիշեր ե... Այստեղ, ափի վրա, միայն աղոտ կրակներ են, — վոչինչ չի յերեսում, թե ինչ ե կատարվում թշնամու կողմում: Ժամը մոտ յերկուսին լուեց արտիլերիան... Արտասովոր մի լուսթյուն ափեց... հաղիվ լուսեց լուսաբացը...

Յեվ հանկարծ սարսափելի դղրդանքով պայթեց կամուրջը, գետը նետվեցին չուգունե հսկաները, վառ բոցը խաղաց ալիքների վրա... Լույս եր, ինչպես ցերեկը...

Բոլոր տնակի մոտ կանգնածները վեր թռան թռուրը և նայում եյին գետից այն կողմ, — այնպես ուզում եյին իմանալ, թե ինչ ե կատարվում այնտեղ — թշնամու բանակում: Յեվ ինչու հենց հիմա, այս ժամին, նա վոչնչացրեց չուգունե հսկային: Ասել ե, այնքան ել

լավ չե դրությունը... Գուցե արդեն նահանջում են...
Գուցե, և բրիգադները արդեն շատ են մոտեցել Ռւֆային!

Բոլորին տիրել եր տեսդային մի անհամբերություն... անցնում եյին ժամերը: Յեվ յերբ պարզվեց, վոր բրիգադները իրոք շարժվում են դեպի քաղաքը, հրաման արվեց գետն անցնելու: Վորտեղից վոր ե յերեացին նավակներ, խոտերից դուրս քաշեցին և ջուրն իջեցրին փոքրիկ, կապված լաստեր, ցած գցեցին գերաններ, թամբեցին այդ գերանները ու լողացին...

Թշնամին մի հաճախակի անկանոն հրաձգություն սկսեց: Յերեսում եր, վոր նա ծայր աստիճանի անհանդիստ ե, գուցե և խուճապված: Արակիլերիան ուժեղացրեց իր կրակը, հարվածում եր թշնամու առաջինյա խրամատները...

Մեկ-մեկ յերկ-յերկու, փոքրիկ խմբակներով լուսում եյին հա լողում թշնամու կրակի տակ կարմիր-բանակայինները, տեղ եյին հասնում, դուրս թռչում, հենց իջած տեղում ավազի մեջ փորում եյին հողե թռւմբեր, պառկում, պահում այդ թմբերի յետեր գլուխն ու ինքնին կրակում...

Այրում եր ուժեղ միջորեյի արևը: Մահացու շոդ եր: Քրտինքը առուներով եր հոսում: Ծարավ ե:

Յեվ հա ծավալվում ե, աճում կարմիր շղթան: Ավելի յեռանդուն ե կրակը և ավելի թռւյլ, անող ե դիմադրությունը: Թշնամին խուճապի յեր յենթարկված:
«Ուռա!» — բարձրացան վագեցին... խրամատների առաջին գիծը ազատեցին, վոմանց դուրս քշեցին,

մյուսներին գերեցին, նորից պառկեցին... Յեվ հենց այստեղ, նրանց հետ պառկած եյին գերիները, զինաթափ, շփոթված, վի մահացու սարսափով: Այսպես, վագե-վազ հաջորդաբար, ափից ավելի հեռանալով, խորանալով դեպի քաղաքը...

Զանագան կողմերից փողոցներն եյին մտնում կարմիր զորքերը... Ամենուրեք բանվորների ահազին ամբոխներ... անզուսպ ճիշերով արտահայտում եյին նրանք իրենց բուռն ուրախությունը: Յեվ հիացք, վողջույններ քաջ գնդերին, և ծիծաղ, և ուրախ, անզապելի արցունքներ... Մոտ են վազում կարմիր-բանկայիններին, քաշում վերնաշապիկները, — ոտար, սակայն այնքան թանդագին ու մոտիկ — թափահարում են բարեկամաբար, ամուր սեղմում են ձեռքերը... Անասելի ուժի պատկերներ!

Ցուղոս ըլուզները շպալերներով պաստառել են փողոցները. նրանք ընթանում են ամբոխի առաջ — այս բուռը հաղթության յերջանկությունն ե, — գլխավորապես, յերջանկություն նրանց համար...

Բայց ըլուզների ու շալիկների յետեր, մայթերի վրա, նրբափողոցներում, ցանկապատերի վրա, տների բաց պատուհաններում, կտուրների վրա, ծառերի և սյուների վրա, — այստեղ են Ռւֆայի բոլոր ազատագրված քաղաքացիք. նրանք ել ուրախ են դիմավորելու կարմիր բանակը: Իսկ նրանք, վոր բնակ ուրախ չեն, գնացել են կոլչակի յետերց: Գնդերով, գնդերով, գնդերով անցնում են կարմիր զորքերը,

Շարքված, հպարտ փայլեցնելով սվինները, անցնում են հանգիստ, լի իրենց անհաղթ ուժի գիտակցությամբ։ Յերբեք չես մոռանա այդ մարմարե, փառապանձ հանդսությունը, վոր քարացել ե նրանց փոշապատ տանջահար դեմքերի վրա!»

Իսկույն, անմիջապես և ամենից առաջ — դեպի բանտ։ Գոնե մի հոգի մնացել եւ Միթե գնդակահարել են բոլորին։ Բացվում են կրծտոցով ժանգոտ ծղինիներով բանտի ծանր դռները... վագում են նրբանցքներում... դեպի կամերաները... միայնակները... Աչա մեկը, մյուսը, յերրորդը։ Շուտ, ընկերներ, շուտ դուրս յեկեք բանտից! Ցնցող պատկերներ։ Բանտարկվածները զըկավարվում են իրենց աղատարարների հետ, առավել թույլերն ու տանջվածները չեն դիմանում, հիստերիկաբար հեկեկում են։

Այստեղ ել այնպես, ինչպես և բանտի պատերից դուրս — և՝ ծիծաղ, և՝ ուրախության արցունքներ։ Իսկ բանտի մոայլ կոլորիտը այս տեսությանը տալիս ե մի ինչ վոր առանձնահատուկ, խորը, խորհրդանշանային և խորհրդավոր ուժ...»

Կարմիր գնդերից փախչելուց, սպիտակ գեներալները չեն հաջողել գնդակահարելու իրենց գերիների մնացորդներին... Սակայն մութ գիշերները և Կոլչակի սպիտակ ժանդարմները — միայն նրանք կարող են պատմել, թե ուր են մեր ընկերները, վորոնց մոայլ խմբերով անվերադարձ և անհայտ, թե ուր, ձանում եյին ամեն գիշեր։ Կենդանի մնացածները պատմում

եյին հետո, թե ինչպիսի չարաչար տանջանք ե այդ, ապրել պիղծ ծաղրի, սպայական թափթփուկների անխիղճ և բութ քամահրանքի խելահեղության մեջ, և ամեն մի մթնշաղին սպասել իր հերթին մոտակա գիշերում...»

Բանտարկյալներին ազատելուց հետո, ամենուրեք պահակներ եյին դրել, քաղաքում — պատրուներ, ծայրամասերում — անփոխ պահակներ... Վոչ թալաններ, վոչ բոնություններ, վոչ մի անկարգություն ու սկանդալ — չե վոր քաղաք և մտել կարմիր բանակը, դիսցինզինայով ամուր, հեղափոխական պարտքի գիտակցությամբ լի...»

Հենց այդ առաջին որվա ընթացքում մեկը մյուսի յետից գալիս եյին պատվիրակություններ բանվորներից, զանազան հիմնարկությունների ծառայողներից, — վոմանք վողջունում եյին, մյուսները շնորհակալություն հայտնում լուսության և այն կարգ ու կանոնի համար, վոր հաստատվել եր քաղաքում...»

Պատվիրակություն յեկավ հրեյական սոցիալիստական կուսակցության կողմից և պատմեց այն սարսափների մասին, վորոնց յենթարկվել ե այստեղ հրեյական ազգաբնակչությունը կոլչակինովշինայի որով։ Ծաղրին և խստություններին սահման չե յեղել, բանտ են նստեցրել առանց վորեւ պատճառի։ Խփել, ծեծել փողոցում հրեյային մի վորեւ վոսկյա ուսաղիրներ ունեցող սրիկա համարել ե և լավագույն, և անպատիժ մի հաճույք...»

— Յեթե նահանջելու լինեք — ասում եր կուսակցության ներկայացուցիչը, — բոլորս մինչեւ վերջին մարդը կհեռանանք ձեզ հետ... Ավելի լավ ե մերկ և սոված Մոսկվան, քան այս փայլուն ու կուշտ հրեշտային մղճավանջը:

Նույն որը հրեյական յերիտասարդությունը ձեռք զարկեց կամավորական խումբ կազմակերպելուն, վորը մտավ Կարմիր բանակի շարքերը:

Դիվիզիայի քաղաքական բաժինը լայն աշխատանք ծավալեց: Հենց առաջին ժամերի ընթացքում տարածեցին մեծ քանակությամբ դրությունը պարզող թռուցիկներ: Քաղաքում պատերին փակցրած եյին պատի լրագրներ, իսկ առավոտվանից կանոնավոր կերպով սկսեց լույս տեսնել դիվիզայի ամենորյա լրագիրը: Քաղաքի բոլոր ծայրերում անընդհատ, մեկը մյուսի յետերց, կազմակերպվում եյին թռուցիկ միտինգներ: Բնակիչները հուետորներին դիմավորում եյին հիացած, շատերին հենց այստեղ, միտինգի ժամանակ բարձրացնում եյին ողը, որորում, տանում ձեռների վրա, — վոչ թե յերկելի հուետորական հատկությունների համար, այլ ուղղակի ուրախությունից, զգացմունքների առատությունից: Քաղաքային մեծ թատրոնը մենք գրավեցինք մեր թատերախմբով. այստեղ ամբողջ աշխատանքը տանում եր անխոնջ Զոյա Պավլովնան, — նա յեր հոգում դեկորացիաների գործը, ճարում եր թատերազգեսաններ քաղաքում, հոգում եր ներկայացումների մասին, խաղում եր ինքը: Թատրոնը միշտ

բերներան լիքն եր կարմիր-բանակայիններով: Արդեն մի քանի որ հետո, յերբ վիրավոր Զապայեվը մտավ քաղաք և յեկավ թատրոն, նա բոլոր մարտիկների անունից վողջունեց բեմից Զոյա Պավլովնային և ընձեռնեց նրան մի ծաղկեփունջ, և վողջ հսկայական դահլիճը վողջունում եր իր սիրած աշխատողին ճիշերի դպրոցով և բուռն ծափահարություններով — դա նրա համար լավագույն և մինչեւ որս անմոռանավ վարձատրությունն եր կարմիր զինվորներից:

Քաղաքը մեկից կենդանացավ, սկսեց ապրել նոր կյանքով: Այդ մասին առանձնապես խոսում եյին նրանք, վորոնք աղոտ ու ծանր կյանք եյին վարել սպայական «ազատությունների» ժամանակ:

* * *

Կոլչակին Ուֆայից հեռու քշեցին այլ դիվիզիաները, իսկ 25-րդ դիվիզիան այստեղ պահեցին հանգստանալու, և յերկու շաբաթից ավելի նա մնաց այստեղ, Ուֆայի շրջանում: Ժամանակը իզուր չեր անցնում. զորամասերը իրենց կարգի եյին բերում այնքան յերկար ու հոգնեցուցիչ արշավից հետո: Շտաբերն ու հիմնարկություններն ել նույնպես կարգի եյին գալիս ու քիշ-քիչ կանոնավորում այն բոլոր գործերը, վոր հավաքվել եյին, բարդվել տաք արշավագային շրջանի միջոցում: Անսպառ ուժով աշխատում եր քաղաքական բաժինը, վորի պետը այժմ Ռիժիկովի փոխարեն Սուվորովն եր, Պետերբուրգի բանվոր, արտա-

քուստ համեստ, պարկեշտ, բայց յերելի, անխոնջ աշխատող: Նա քաղբաժնում այնքան շատ ժամանակ եր մնում, վոր նրան այստեղ կարելի յեր գտնել ամեն ժամ: Հստ յերեռւյթին, այստեղ ել զիշերում եր: Կրայնուկովը, Ֆյոդորի ոգնականը, մոտ բարեկամացավ Սուվորովի հետ և հանձնարարություններից ազատ բոլոր ժամերը անց եր կացնում նույնապես քաղբաժնում: Նրանք յերկուսով փաստորեն կատարում եյին այն հսկայական քաղաքական աշխատանքը, վորը կատարված եր այս յերկու շաբաթվա հանգստի ժամանակ: Կիչկովը միայն ոգնում եր նրանց խորհուրդներով և մասնակցում եր զանազան խորհրդակցություններին — նրա ժամանակը անցնում եր դիվիզիայի այլ մարմինների հետ վարած աշխատանքում, վորին նրանք Զապայեվի հետ առիթ ունեցան ծանոթանալու այստեղ առաջին անգամ Բելեբեյից հետո:

Շուտով սկսեցին տեղալ տագնապալի լուրեր Ուրալի ճակատից: Այնտեղ կազակներին հաջողությունը հաջողության եր հաջորդում, միայն նրանք վոչ մի կերպ չեյին կարողանում ներս խուժել պաշարված Ուրալսկ քաղաքը: Տեղեկությունները ստացվում եյին լրազրների միջոցով, բանակային տեղեկազբերից և հեռագրերից, նամակներից, մանավանդ նամակներից... Կարմիր-բանակայինները տեղեկանում եյին, վոր իրենց հայրենի գյուղերում ամենակուլ հրե մըրկով պահում են վայրի կազակային վոհմակները, վոչնչացնում են տնտեսությունները, սպանում են, չարչարում նրանց,

վորոնց զավակները, ամուսինները և յեղբայրները Կարմիր բանակն են մտել: Գնդերը տագնապվեցին, ալեկոծվեցին, խնդրում եյին արձակուրդ տալ Ուրալի ստեղները գնալու, ուր նրանք յերդվում եյին, տասնապատկված ուժով կռվել Ուրալի լրբացած կազակների դեմ:

Զապայեվը ու Ֆյոդորը այդ մասին հաճախ զրուցում եյին և հավաստիանում, վոր դիվիզիայի տեղափոխությունը անհրաժեշտ է և ոգտակար, յեթե այդ բանին արգելք չհանդիսանան վորեւ բացառիկ հանգամանքներ: Անընդհատ բանակցում եյին կենտրոնի հետ, բացատրում եյին և ֆրունզեյին, թե ինչպիսի տրամադրություն է տիրում մարտիկների շարքերում և վորքն անձեռնոտու յե այդ տրամադրությունը այլ ճակատների համար, բացի Ուրալի ճակատից: Բացի այդ, զալիս եյին հատ-հատ գաղթականներ այն կողմերից կամ կամավորներ, վորոնք բացի օիրենց դիվիզիայից» այլ տեղ չեյին ուղղում ճառայել: Տրամադրությունը լարվում եր: Կենտրոնում հաշվի առան կացությունը՝ զուտով հրաման ստացվեց դիվիզիան Ուրալի ստեղները տեղափոխելու: Գնդերի վոզերությանը ծայր չկար — արշավի եյին պատրաստվում՝ ասես, գնում եյին ուրախ հանդիսավոր մի յերթի: Զապայեվը շարքային մարտիկներից ել ավելի զոհ եր, նա տեղափոխվում եր ստեղները, այն ստեղները, ուր պատերազմել եր արդեն շատ ամիսներ, ուր ամեն ինչ իրեն ծանոթ եր, հասկանալի ու հարազատ, —

վոչ այնպես, ինչպես այստեղ — թաթարական առւների շրջանում։ Արագից ել արագ վերջացան բոլոր պատրաստությունները և դիվիզիան ճանապարհ ընկավ։

* * *

Ուրալսկը յերկար ժամանակ շրջափակված եր կտղակների ողակով — մինչև Զապայեվի դիվիզիայի, Ուրալսկի ազատարարի մոտենալը։ Նրա հերոսական պաշտպանությունը կանցնի քաղաքացիական կովկապտմության փայլուն եջերը։ Վողջ աշխարհից կտրված, ուրալցիք պատվով դիմացան կաղակների շրջապատման, շատ անգամ և գերազույն հերոսությամբ յետ մղեցին նրանց արշավները, իրենք ել յերբեմն հարձակվելով անհանգուստացնում ելին թշնամուն ամեն կողմից։ Հոգնատանջ գարնիզոնը, վորին միացել եր Ուրալի բանվորների կամավորական ալիքը, յերբեք չեր տրտնջում հոգնածությունից, սովից, և միտք անգամ չուներ անձնատուր լինելու ցնծացող թշնամուն։ Մահուու կյանքի պայքար եր մղվում։ Բոլորը գիտեյին, վոր «միջին ճանապարհ» չկա այս գործում և վոր կաղակներին գերի դառնալը նշանակում է փաստացի լիկանքներ, չարչարանքներ և գնդակահարություններ... Հենց քաղաքի մեջ բացվում ելին դավադրություններ։ Տեղական սպիտակ բանակայինները տեղական գարնիզոնից անկախ հաջողում ելին կապվել կազակային զորամասերի հետ, նրանցից ցուցմունքներ ելին ստանում, իրենք ել տեղեկացնում ելին կաղակների հրա-

մանատարությունը քաղաքի անց ու դարձի մասին... Արդեն սպառվում ելին ոռոմբերը, փամփուշտները, վերջանում եր պարենավորումը և գուցե շուտով կարմիր հերոսները հարկադրված լինելին կովելու միայն սիններով, սակայն այդ ել նրանց չեր վախեցնում, — առույգ և հաստատամիտ, հանգիստ և առնական եր պաշարվածների տրամադրությունը։ Իսկ յերբ լուր հասավ նրանց, վոր ողնության ե զալիս Զապայեվի դիվիզիան, անհետացան նրանց կասկածների մնացորդները, ավելի տոկուն, հերոսաբար յետ ելին մղվում վերջին դրոհները։

* * *

Ուրալսկին մոտենալու շրջանում խոշոր կոիզմեր աեղի չունեյին, թեև առանձին բաղկութներ տեղի ելին ունենում ամեն որ։ Կաղակները, վոր ծանօթ ելին Զապայեվի գնդերին դեռ 1918 թվից, մեծ ցանկություն չունեյին նրանց հետ ճակատ առ ճակատ կովելու և գերադասում ելին նահանջել, ալոկոտելով այն տեղերում, ուր այդ հաջողվում եր։ Սոբոլևսկայա ստանիցի ճանապարհին կաղակները յերկու զրահակիրով, թերից հեծելազորը առաջացնելով շարժվեցին իվանովո-Վոզնեսենսկից գնդի դեմ։ Նրանք յենթադրում ելին, վոր զրահակիրների կըակից կերերան ու կփախչեն կարմիր-բանակայինները — այն ժամանակ հեծելազորը իր գործը կտեսներ... Բայց ամեն ինչ կատարվեց ծայր աստիճանի պարզ և նույնիսկ բնավ անեֆֆեկտ՝ շղթաները պառկած ելին ինչ-

պես մեռելներ, նրանք յետ քաշվեցին, թողին, վոր զրահակիրները անցնեն իրենց թիկունքը, և գնդակում եյին թշնամու անթիվ-անհամար հեծելազորը... Իսկ այդ միջոցին կարմիր բատարեյան ավելի ստույգ ու մահաբեր մեքենաներին ավելի մոտիկ եր պառկեցնում իր ոռումբեռը: Ուրիշները վերադարձան այնպես, ինչպես յեկան Այստեղ նույնիսկ կորուստ ընազ չկար — այնքան հանգիստ և կազմակերպված, այնքան պարզ եր ընդունված և վերջացրած այդ թշնամական գրո՞ն:

Իսկ այստեղից վոչ հեռու, հենց այնտեղ, Սոբոլսկայա ստանիցայի մոտ, կազակները շրջապատել եյին կարմիր զինվորների անջատված մի վաշտ, և նրանց գրեթե բոլորին վոչնչացրել: Ոգնության ուղարկեցին մի վաշտ ևս — նույն վիճակին եյին արժանացել: Յեզ միայն այն ժամանակ համաձայնվեցին, վոր չի կարելի այդպիսի չնչին ոգնությամբ իրական ոգնություն հասցնել, վոր այդ — իզուր ծախս և մարդկային և տեխնիկական ուժերի: Ուղարկեցին մի գունդ և նա կատարեց այն, ինչ պահանջվում եր, զարմանալի արագությամբ: Յերբ իմացավ Զապայեվը — շատ աղմկեց, հայնոյում եր, սպառնում՝

— Դու հրամանատար չես, այլ փայտյա խրավիլակ: Պետք ե զիտենաս մշտապես, վոր կազակը կովել չզիտե, նա զիտե միայն պրապկել, ահա և պոպկել ե՝ մի վաշտը մյուսի յետելից, մեկը մյուսի յետելից: Եհ, արագի ես դու! Տալ քեզ, «ինչ հարկն ե»...

* * *

Զնայած կազակների հետ ունեցած ամենորյա անընդհատ բաղխումներին, գնդերը շարժվում եյին արագ, վոտքով քանչորս ժամկա ընթացքում հիսուն վերստ եյին անցնում:

Ստանիցաներում և գյուղերում կարմիր զինվորներին զիմավորում եյին վորպես ազատարաների, հաճախ բնակիչները ընդառաջ եյին դուրս գալիս, վողջունում, ոգնում ինչով և ինչպես կարող եյին, բաժին եյին հանում ունեցածից: Իրեն Զապայեվին արտակարգ ընդունելություն եյին ցույց տալիս — նա բառիս բուն իմաստով «որվա հերոսն եր»: ։

— Գոնե մի խոսք ասա — խնդրում եյին մուժիկները, — ելի՛ կանցնեն կազակները, թե դու նրանց, հոգի ջան, բոլորովին քշեցիր:

Զապայեվը ծիծաղկուն վոլորում եր բեխը և պատասխանում, բարեհոգի, ուրախ ու գոճ:

— Միացեք մեզ հետ — այն ժամանակ չեն գա, իսկ յեթե ձեր կանանց յուբկաները հոտոտելով մնաք, ով պիտի պաշտպանի ձեզ:

— Իսկ մենք ինչպես:

— Այ հենց այնպես, ինչպես մենք — պատասխանում եր Զապայեվը, ցույց տալով բոլոր իրեն շրջապատղներին: Յեզ նա սկսում եր բացատրել գյուղացիներին կարմիր բանակի ուժի պատճառը, թե վորքան այդ բանակը հարկավոր ե Խորհրդային Ռու-

սաստանին և ինչպիսի վերաբերմունք պիտի ունենա դեպի այդ բանակը աշխատավոր գյուղացիական մասսան:

Չափայեվը լավ հիշում եր մի տասնյակ ստույգ, անվիճելի սկզբունքներ, վոր նա մասամբ կարդացել ե մի վորնե տեղ, իսկ մեծ մասամբ լսել եր խոսակցության ժամանակ և պահել հիշողության մեջ։ Որինակ, մեր բանակի դասակարգային կազմի մասին՝ այն մասին, վոր կազակները վոչ թե պատահաբար, այլ առայժմ անխուսափելիորեն մեծ մասամբ մեր թշնամիներն են. այն մասին, վոր սոված կենտրոնին անհրաժեշտ ե անմիջական ոգնություն հասցնել կուշտ ծայրագավառներից և այլն և այլն։ Այս սկզբունքները, այնքան համոզիչ և այնքան պարզ, նա ներընդունել եր իր պարզ և հստակ մտքերի ամբողջ ուժով, ընդունել եր մի անգամ ընդմիշտ և անդարձորեն, պարծենում եր, վոր գիտե այդ սկզբունքները և հիշում ե, իսկ վորնե մի խոսակցության ժամանակ աշխատում եր մեջ բերել անպայման այդ դրությունները, տեղի կամ անտեղի.

Գյուղացոց-մուժիկներին նա այդ սկզբունքները բացատրում եր առածին սիրով, իսկ նրանք լսում եյին բացառիկ ուշադրությամբ։ Յերբեմն պատահում եր, վոր անհեթեթություններ ել եր շարում, սակայն ընդհանուր արդյունքը միշտ լավագույնն եր լինում։ Նա որինակ, մեծ դժվարությամբ և միանգամայն աղոտ եր պատկերացնում իրեն խոշոր կոլեկտիվ տնտեսու-

թյունը, աշխատանքի սիստեմը այդ տնտեսության մեջ, անդամների փոխարաբերությունները այնտեղ և այլն. շատ հաճախ սխալվում եր «բաժինների», «ինքնուրույնության» և այլի վերաբերմամբ։ Այդ կողմից նա կարգին բացատրել վոչինչ չեր կարող, սակայն նույնիսկ այդպիսի զրույցներից ել դրական արդյունք եր ստացվում։ Նա կոչ եր անում աշխատասիրության, բողոքում ագահության և շահամոլության, խավարամության և տպիտության դեմ, չատագովում եր աշխատանքի նոր կատարելագործված միջոցները գյուղացիական տնտեսության մեջ։ Մի գյուղում նա այնպես վառ եր նկարագրել Փարբեկային բանվորների սովը, այնքան դաժան նախատել գյուղացիներին, վոր իրենք կուշտ են և բոլորովին մոռացել են իրենց քաղցած յեղբայրներին, վոր գյուղացիք իսկույն վորոշել են ցորենի հավաք սկսել Մոսկվա ուղարկելու համար։ Ընտրել են և գործի կազմակերպիչներ — հենց այնտեղ ժողովում, և յերդվել են Զապայեվին, վոր անպատճառ բոլորը կուղարկեն Մոսկվա, վոր կհավաքեն, իսկ իրեն, Զապայեվին, այդ մասին լուր կտան դիրքերում։ Հավաքեցին, արդյոք, ուղարկեցին — հայտնի չե, իսկ Զապայեվին տեղեկացնել նրանց չհաջողվեց. հաշված եյին Զապայեվի որերը — շուտով Զապայեվը մեռավ։*

* Այն մասին, թե ինչպես մեռավ Զապայեվը, կարդացեք «Զապայեվ» Ֆուրմանովի, հրատ. ԽՍՀՄ Ժող. Կենտր. Հրատ.

* * *

Այսպես, ցնծությամբ դիմավորվելով, մոտենում
եյին իրենց նապատակին կարմիր գնդերը։ Շուտով
նրանք Ուրալսկի պատերի տակ եյին։ Վերջին կռիվ —
և կաղակները փախան, ճեղքելով ողակը։ Ուրալսկից
տաս վերստ հեռավորության վրա դուրս յեկան պա-
շարված գարնիզոնի ղեկավարները, նրանց հետ մի
եսկադրոն հեծելազոր, յերաժշտախումբ... «Ենտեր-
նացիոնալի» հնչյուններով, ուրախության ճիչերով,
ուրախության արցունքները աչքերին դիմավորում
եյին, գրկում իրար, ուղում եյին մեկից և շատ բան
իրար պատմել, բայց անկարող եյին — այնքան լցված
եյին զգացմունքներով, այնքան զգացված եյին, ցնցված։

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԱՀԱՆՁԵՑԵՔ

ՄԵՐ ԳՐԱՅՈՒՑԱԿԸ, ՎՈՐ

— ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶԲԻ

ԴԻՐԵԼ, Մոսկվա, Никольская, 10.

ЦЕНТРИЗДАТ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0322123

15 ԿՈՊ.

Цена 15 коп.

Х. 3.



Д. ФУРМАНОВ
Под Уфой
и Уральском
(перевод с русского)

На армянском языке

5-1 3
е-

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10